

Շարքը կարդալ Բ. էջ

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՆՈՐԱԿԱԶՄ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Շար. Ա. Էջէն

Ժառանգը վառ պահել Հայ Ժողովուրդի զաւակներուն մէջ, սատարել Մի ի թարի ան ձին ու գործին ծանօթացման, ներկայացնել Մի ի թարի դադափարը՝ կանը յատկապէս նոր սերունդի մէջ, ամրապնդել կապը հայ ազգին եւ Մի ի թարեան Միաբան֊նութեան միջեւ, բարոյապէս աջակցել Մի ի թարեան Միաբանութեան, համախմբել սաները միութեան մէջ համերաշխութեան եւ գործակցութեան դադա֊փարներու տակ։

Այս առթիւ Միութեան վարչութիւնը տեղին կարգադրութեամբ, անդամները, սաները ու իրենց ընտանիքները, ինչպէս նաեւ համակիրները իրաբու՝ ծանօթացնելու ու համախմբելու նպատակով իր անդրանիկ ճաշկերոյթը սարքեց 7 Փետրուար 2010 Կիրակի երեկոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ շէնքնասրահին մէջ հոծ բազմութեան մը ներկայութեամբ։

Բացման խօսքով հանդէս եկաւ Մանուշ Միութեան փոխ Ատենայետ՝ Վենետիկ Ս. Ղազար Վանքի սաներէն Յարութիւն Մարտիրոսեան, որ որպէս հանդիսավար, իրեն վստահուած պարտականութիւնը ձեռնհասօրէն կատարելով ամբողջ երեկոյթի տեւողութեան համեմուտեւ ոճով ներկաներուն ուշադրութիւնը վառ պահեց եւ առաջին առթիւ ծանօթացուց նորակազմ վարչութեան անդամները։

Ներանհերու օրհնութիւնը կատարեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցոյ Հոգեւոր Հովիւ՝ Հայր Եղիա Մ. Վրդ. Քիրէճեան, որմէ ետք տեղի ունեցաւ ճաշի սպասարկութիւն։

Երիտասարդ դաշնակահարու Հի Ալեքսանտրա Պալեան զեղեցիկօրէն նուագեց Հայր Վ. Վրդ. Յովհաննէսեանի խօսքերուն վրայ, Գուրգէն Ալեմշահի կողմէ դաշնաւորուած «Իմ հեռաւոր Հայրենիք» կտորը, որուն բոլոր ներկաներն ալ մասնակից դարձան իրենց երգով։

Մի ի թարեան Մանուշ Միութեան նորընտիր Ատենայետ Պոլսոյ Մի ի թարեանի Սան՝ Եղուարդ Պալեան բարի գալուտ մաղթելէ ետք, ողջունեց ներկայութիւնը հիւրաբար քաղաքս գտնուող վաստակաշատ ուսուցիչներ Տէր եւ Տիւղիտի Մերի Զիվէրնելու, որոնք իրենց հարգածները այցելելու նպատակով Թորոնթօ կը գտնուէին։ Պր. Պալեան զնահատական խօսքերով արտայայտուեցաւ Պր. Զիվէրնի մասին որ ժամանակին իր անդլեքնի ուսուցիչը եղած էր։ Այս խօսքերը արժանացան ջերմ ծափահարութիւններու։ Եղուարդ Պալեան բացատրեց միութեան նպատակները, առաքելութիւնը եւ յայտնեց թէ այս միութիւնը իր տեսակին մէջ ղեգակի է, որովհետեւ «համամի ի թարեան» սանուց միութիւն մըն է եւ կը համախմբէ բոլոր երկրներէ եկող Մի ի թարեան սաները։ Ան իր խօսքերուն մէջ մասնաորբաբար շնորհ թէ մեծ գուգաղիպութեամբ աշօրնաւ եւ յատկանշական օր մըն էր, որովհետեւ 7 Փետրուար թուականը կը գուգաղիպէր Մի ի թար Աբրահօր ծննդեան 334 ըդամեակին։

Միութեան պատուոյ անդամակցութեան յուշագրեր ստացան Հայր Եղիա Մ. Վրդ. Քիրէճեան եւ Սարգիս Համպրեան, ձեռամբ Կարօ Գալուքեանի եւ Գէորգ Երեմեանի, որոնք Մի ի թարեան Միաբանութեան սաները ըլլալով հանդերձ հաղորդաքաղ եւ Մի ի թարեան գիտակցութեան խիստ կապուած, անձնագործութեամբ մասնակից սատարող եւ թիկունք։ Այս առթիւ Հայր Եղիա եւ Պր. Համպրեան փոխանցեցին իրենց սրտի խօսքերը ու բարեմաղթանքները։ Պոլսոյ Մի ի թարեան վարժարանի սաներէն Հայկ Միտաբեան եւ Հագմիէյի (Լիբանան) Մի ի թարեանի սաներ Շահէ Ղազարեան եւ Արտա Գէորգեան իրենց սրտի խօսքերը փոխանցեցին ու դպրոցական յուշերէ

դրուազներ պատմեցին։

Շնորհակալի եւ խոստմալից երիտասարդուհիներէն Լին Իշնար, որուն մասին աւելի առաջ ալ արտախալուած էինք, եւ որ իր գեղեցիկ ձայնով յայտնութիւն մը դարձած է քաղաքիս մէջ, դաշնակի ընկե ռակցութեամբ Հո ի փսիմէ Տէ միքճեանի, մեներգեց Աննօ Պապաճանեանի «Իմ Երեան» կտորը, ցոյց տալով իր բեմի եւ ձայնի կարողութիւնը որ արժանացաւ ջերմ գնահատանքի։

Սպիտակ մեծ պատուոյ վրայ ցոյց տրուեցաւ Պոլսոյ Մի ի թարեան վարժարանի Մեծաւոր Հայր Սարգիս Վրդ. Երմիէյի, Ս. Ղազար Վանքէն Հայր Արխտակէս Վրդ. Մանուկեանի եւ Վիեննայէն Աբրահայ Հայր Պօղոս Վրդ. Քոճանեանի պատգամները եւ բարեմաղթանքները։

Ապագայ խոստացող մեր երիտասարդ տուտուկահարներէն Տարօն Մարտիրոսեան զեղեցիկ կերպով մեկնաբանեց Սայաթ Նովայի «Աշխարհում» կտորը, ծիրանափող իր նուագով փայլ մը տալով երեկոյթին։ Տարօն այդ ծիրանափողը նուէր ստացած էր անուանի տուտուկահար Ճիւան Գասպարեանէ։

Իրենց դպրոցական յուշերէն դրուազներ պատմելով հանդէս եկան նաեւ Մի ի թարեանի սաներ Սարգիս Ասաէլեան-Հայկաչէն, Տօքթ. Յարութիւն Դրնամեան-Աղեկսաւորիայէն, Ալեքսան Մարտիրոսեան-Ս. Ղազարէն, ինչպէս նաեւ հանդիսավար Յարութիւն Մարտիրոսեան։

Մեր երիտասարդ մանկամարդուհիներէն Արմինիա Սարգիսեան իր անուշ ձայնով մեներգեց Մի ի թար Աբրահօր «Ով իրանուհի» կտորը արժանանալով ծափող ընդներու։

Ապա ջերմ հրաւիրուեցաւ վաստակաւոր ուսուցիչ՝ Պետի Զիվէր, որ իր հակիրճ սրտի խօսքերու աւարտեց «Մի ի թարեանը հպարտէ իր պտուղով» վերջաբանով։

Պատառի վրայ տեսաբերիչով իր ողջոյնները եւ պատգամը փոխանցեց, Միացեալ Մի ի թարեան Միաբանութեան առաջին ընդհանուր Աբրահայր Գերապա՝ յառ Հայր Եղիա Վրդ. Քիւլապեան, իր խօսքը ուղղեց այն սենեակին ուր կը գտնուէր Մի ի թար Աբրահօր բազկաթուղ ու սեղանը որուն վրայ դրուած էր Ս. գիրքը եւ Հայկազեանը։ Աբրահայրը իր խօսքերը շարունակելով ըսաւ «Դուք այսօր հաւաքուած էք շարունակելու Մի ի թար Աբրահօր հոգին, որքան որ դուք հեռաւոր արեւու վրայ կ'ապրէք Աբրահօր հոգին միշտ ձեր հետ եւ ձեր տան մէջն է։ Թող Տիրամայրը ըլլայ ձեր բոլորիդ պաշտպանը, ձեր ընտանիքները ըլլան Տիրամօր եւ Աբրահօր հովանիին ներքեւ»։

Հանդիսավարի շնորհակալութեան խօսքերով այս բացառիկ երեկոն իր աւարտին հասաւ։ Անդամները սրտանց շնորհաւորեցին Մի ի թարեան Մանուշ Միութեան նորակազմ վարչութիւնը եւ ապագային կատարուելիք ձեռնարկներուն համար յաջողութիւն մաղթեցին։



Լին Իշնար երգի պահուն (Թոմնոմին Է Զիվէրէյուն) – Տոտուկահար Տարօն Մարտիրոսեան։

ՀՈՒԻՎՈՒՏԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ

«Հէրի Փոթըր» ժայռաւններու ասող Էմմա Ուոթսըն 2009ին ապահոված իր գումարով գերադանցած է հոլիվուտեան միւս գերասանուհիները։ Ուոթսընի աստղային ուղին սկսեց 2001ին, երբ ան նկարահանուեցաւ «Հէրի Փոթըրն ու փրկափայտիկան բարը» ժայռաւնի առաջին մասին մէջ։

Ուոթսըն անցեալ տարի համաձայնագիր մը ստորագրած է «Պարպըրի» ընկերութեան հետ, իսկ այս

տարի «Փոթըր Թրի» հետ միասին ներկայացուցած է այդ ընկերութեան հարգատներու հաւաքածոն։ Ուոթսըն վեր դատուած է այնպիսի աստղերէն, ինչպիսին են Ստաւ-ձկաբա Փարքըր եւ Աննէ լինա Ճոյի։ Հէրի Փոթըրի գիտակատարը Տէնիէլ Ռէտրիֆ 2009ին վատկած է 41 միլիոն տոլար եւ դարձած հոլիվուտի ամենաբարձր վարձատրուող դերսանը, իր ետին ձգելով բաղմաթիւ աստղեր։



ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԿԱԹԻԼ ՄԸ ՄԵՂՐ

Կը պատմուի, թէ Մեծն Աղեքսանդր երբ արշաւեց Փոքր Ասիա, նախապէս բաժնեց ամբողջ հարատոթիւնը իր գինակիցներուն։

– Եւ քեզի ի՞նչ մնաց, հարցոց իր մտերիմներէն մէկը։

– Յոյսը պատասխանեց երեւելի գորավարը։ Գաղափարապաշտ հայն ալ՝ սկսելով իր կեանքին պայքարը ազգը առաջնորդելու ղեպի յաւերժութիւն, չի ցափի ու չի վհատիր իր մաքառու մեքոն ընթացքին կրած կորուստներուն համար, որովհետեւ՝ ապահով է որի վերջոյ հալոթիւնն ալ պիտի ունէր իր արդար իրաւունքներուն եւ յոյսերուն արեւածագը։

*

Դատարանին մէջ. Պաշտպան փաստաբանը մեծ խաճաղաւորութեամբ պաշտպանելով իր յանախորդ կ'ըսէ. – Պարոն երդուեալներ, ձեր վճիռը արձակելէ առաջ նկատի պէտք է ունենաք թէ ամբաստանեալը լսողութեան տկարութիւն ունենալով չէ կրցած լսել խղճի՞ն ձայնը։

*

Առիծ մը կը պտղոյի անտառին խորը։ Յանկարծ նապաստակ մը կ'ելլէ իր դիմաց։

– Հո՛ս եկուր բարեկամ, կ'ըսէ առիծը։ Ըսէ՛ տեսնեմ, ո՛ր է կենդանիներու թագաւորը։ – Բեզմէ գատ ո՛ր կրնար ըլլալ, կը պատասխանէ։

խանէ նապաստակը եւ վագելով կը ճեռանայ։ Քիչ ետք, առիծը կը հանդիպի արուեսի մը։

– Ա. ճկեղծօրէն ըսէ տեսնեմ, ո՛ր է կենդանիներուն թագաւորը, կը հարցնէ առիծը։

– Ա. տալ հարցնելիք բա՛ն է, կը յարէ արուեստ։ Կենդանիներուն թագաւորը որո՞ն ես յայտնան։

Առիծը ոտքիս սիտով կը շարունակէ պտույտը եւ կը հանդիպի հսկայ փիղի մը։

– Բարեկամ, գիտե՛ս թէ ո՛ր է կենդանիներու թագաւորը, կը հարցնէ առիծը։

Փոքր պատասխանի փոխարէն կ'ընկիւղի կը բռնէ առիծը եւ բաւն մ'եթր անդին կը նետէ։

Առիծը ինկած տեղէն կ'ելլէ, քիչ մը ինքզինքը կը շտկէ եւ մոմալէն կ'ըսէ.

– Բարեկա՛մ, ինչո՛ւ բարկացար։ Չէիր կրնար պարգապէս ըսել թէ չե՛ս գիտեր։

*

– Բայց ասիկա գողութիւն է, պոռաց Մարիիս։ Երկու հազար ֆրանք պահանջել եւ ակոյալի մը քաշուելուն, մէկ վայրկեանի գործ է եղալլաւ։

– Մի՛ խոռովիր Պր. Մարիիս։ Եթէ կը փափաքիր կրնամ քառորդ ժամէն ալ քաշել, պատասխանեց Տօքթ. Օլիվ...։

*

Մարքոյմէ ամշնալը լաւ բան մըն է, բայց ամենալաւը ինքն իրմէ ամշնալն է։

Կ. Ե. Մ.

ՕՐ ՄԸ ԱՇԽԱՐՀԻ ՅԵՏՄԻԶՕՐԷԻՆ

Գրեց՝ ՌԻՒԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

Թարգմանեց՝ ՍԵՂԱ ԶՕՊԵԱՆ

- Դուք կ'ուզեա՞ որ ամէն բան դժուար ըլլայ։
- Արդէն դժուար է։
- Կ'ուզեա՞ որ աւելի դժուարանան։
- Իմ ուզելուս համար չէ, սորէն այդպէս են։
- Ես չեմ տխրած իր անոնցմէ։
- Գիտեմ։ Տորք մասին խօսէ ինծի։
- Շատ լաւ են։
- Իրա՞պէս լաւ են։
- Հրեշտակի կը նմանին, երկուքն ալ։ Թէ իրական, եւ թէ հրեշտակներ են։
- Կրնայ ըլլալ, բայց մի մոռնար որ սովորական տղաք են։

- Ոչ իմ գաւակներս պղպղակէ չիտուած են։
- Անշուշտ։
- Ժպիտէ՛ եւ ուրախութեան չիտուած են։
- Անշուշտ։ Էյգայի բացակայութիւնը որ բա՛ն պիտի տեսէ։
- Տարի մը, կամ թերեւս վաղն խկ կը վերադառնայ, չեմ գիտեր։
- Այն ատեն ի՞նչ պիտի պատահի։
- Ձեմ գիտեր։
- Սան Ֆրանսիսքոյի տունը շատ գեղեցիկ է։ Ի՞նչ բանի կը ծառայէ հիմա։
- Ձեմ գիտեր։
- Եւ այդ հարցումին պատասխանը գիտցողին խօսքն ալ մտիկ պիտի չընես։
- Որո՞ւ խօսքեր, օրինակի համար։
- Իմ, որովհետեւ գիտեմ թէ՛ անձ, նոր ընդարձակ տուն մըն է ան, տղոց սիրած բաներով լեցուն։ Գիտեմ թէ՛ այդ տունէն զատ որեւէ տեղ իրենք զիրենք հանգիստ չեն զգացած։
- Դուք քու գիտցածներդ գիտես, եւ ալ իմիններս գիտեմ թէ՛ եւ ալ հո՛ս ինքզինքս հանգիստ չեմ զգար։
- Որեւէ տեղ երկար ատեն չես կրնար մնալ, այնպէս չէ՛։

- Ի՞նչ կ'ուզեա՞ որ ըսեմ։ Տորքը ատենմ Սան Ֆրանսիսքօ տանիմ ու յետոյ ես Նիւ Եո՛րք վերադառնամ։
- Ձեմ փափաքիր որ որեւէ բան ըսեմ, իմ ուղեկուս համար. կամ տղոց ուղեկուս համար։ Այս սրահին մէջ գտնուողներէն մէկն եմ եւ, հետեւաբար կրնա՞ս ուղածող ըսել – քեզի համար։
- Ներկայիս կ'ուզեմ Նիւ Եորք մնալ։
- Շատ լաւ։
- Ձեմ ատեր Սան Ֆրանսիսքոյի տունը։ Գեղեցիկ տուն մըն է։ Վէշը առանձին գրեթէ ամբողջ յարկաբաժին մը ունի։ Ռոգին մեծ սրահ մը եւ ննջարան մը ունի։ Թէեւ իմ լողաբանս կը գործածէ, ասկայն կը խորհիմ թէ այդպէս ըլլալու աւելի ճիշդ է։ Խնդիրը այն է թէ՛, այդ կողմերը կ'ստան։
- Ուրեմն հիմա տունը պարտալ է։ Ես կ'երթամ, կը պտրտիմ, յետոյ յարկաբաժինս կը վերադառնամ։
- Կրնաս տեղաւորուիլ, քեզ արգիլող չկայ։
- Տուր տղոց կը պատկանէ։ Ես գնեցի դռն, եւ կը վճարեմ մասնակցարները որպէսզի բոյն մը ունենան։
- Ես ալ իմ բախտս փորձել կ'ուզեմ։
- Գիտեմ։
- Ի՞նչ կ'ուզեա՞ որ ըսեմ։ Երթամ Սան Ֆրանսիսքօ տանիմ։
- Ոտքի ելիր, քալէ՛։ Կ'ուզեմ որ ամէն իսկիւղ փշածը ընես, ինչպէս միշտ ըրած ես, բայց դուն էիր հեռաձայնորդ, հարցնելով թէ՛ լաւ չէ՞ր ըլլար տղոց մասին խօսիլ։ Հիմա այս է իմ բրաձս։
- Տգաքը լաւ են։
- Ուրեմն ամէն խնդիր փակուած է։
- Հիմա ալ բարկացար։
- Ոչ, չեմ բարկացած։
- Լաւ, էթէ բարկանալ կ'ուզեա՞, բարկացիր։
- Կարծեմ գիտեա՞ թէ երկար ատեն առաջ վերջ տուի բարկանալու սովորութեան։

(Շար. 17)

ԽԱՉ – ԲԱՄ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԶԱՅԻՆ ԱԶ
1–Մովի մասին եղած դրութիւն ուսումնասիրութիւն 2–բիծ, մարմնի պակասութիւն ունեցող – նոյն տառերը 3–չգործածուած – մէջը խոթուիլ մտցուիլ, մխրճուիլ 4–յառաջ մղելու ձայնարկութիւն – ծուռ, թեք – կից 5–թուշուն մը – տաքնալու հետեւանքով գողորչիացած ջուր 6–տարւոյն եղանակներէն – ֆրանսացի գրագէտ, որ հեղինակն է «Նեղ Դուռը» վէպին Անտրէ ... 7–գիւղերը ցերեկին խառնել արդիւնք մը ձեռք բերելու համար – ձայնանիշ մը 8–երկու եղբոր կիները իրարու

նկատմամբ – կշռել 9–անասուն մը – կեղտ 10–խորհրդային Միութեան մէջ համայնալարութեան հիմնադիրը՝ Վլադիմիր Իլյիչ ... – նոյն տառերը։

ՎԵՐԷՆ ՎԱՐ
1–ձանչնել մէկը հասարակութեան կամ երկու անցմանքները իրարու 2–փոքր տաք 3–ցած, ներքււր – թատերափայր 4–բայերու անցեալ ընդունելութեան վերջաւորութիւն – ինքնաշարժ – որովհետեւ 5–մտածութիւն, խորհուրդ – նոյն տառերը 6–նոյն տառերը – ճուճացող միջատ մը 7–գիւղատիւ թուշուն մը – իզակսն անուն 8–ձիւռ, կովբու, գամէլ չի եւլն.ի աղբեր – իտալական հեռատեսիլի կայան 9–խոշոր ձուկ տեսակ – դաւն, կծու 10–նոյն տառերը – չորս եղանակն երու յօրինող երաժիշտ
ՆԱԽԻՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Զ	Գ	Ա	Ս	Տ	Ա	Յ	Ն	Ե	Լ
Գ	Ե	Ր	Ի	Թ	Ի	Զ	Լ		
Ե	Ր	Կ		Կ	ՈՐ	ՈՎ			
Ս	Ս		Գ	ՈՐ		Վ	Ա	Տ	
Տ	Ա	Ժ	Ի	Կ		Ն	Ի	Զ	Է
Ա	Մ	Ա	Ն		Բ		Լ	Մ	
Ս		Տ	Ի	Պ	Ա	Ր	Մ	Ի	
Ր	Ր		Լ	Ր	Ա	Տ	Ա	Ր	
Ա		Ա	Ժ	Ա	Կ		Ե	Ր	Է
Հ	Ր	Կ	Է	Զ		Մ	Ս	Ի	Լ